ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1
տնօրենի հետ

ք. Երևան
2023թ.

«15» Փետրվարի

**ՓՐԱՅՄ ՄԵԴԻՔԱԼ ՍՊ Ընկերությունը** ի դեմս՝ Արմեն Խանաղյանի, որը գործում է հիմնադիրների ընդհանուր ժողովի կողմից կայացված կազմակերպության ղեկավարի պաշտոնում ներքոհիշյալ քաղաքացուն նշանակելու մասին որոշման (կամ այլ ակտի կամ կանոնադրության) հիման վրա (այսուհետ Գործատուն), մի կողմից, և քաղաքացի **Արմեն Ցոլակի Խանաղյանը** (այսուհետ Աշխատող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Աշխատողը ընդունվում է աշխատանքի **ՓՐԱՅՄ ՄԵԴԻՔԱԼ ՍՊ Ընկերությունում** որպես **տնօրեն:**
2. Աշխատանքն սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը 15.02.2023թ.
3. Պայմանագրի գործողության ժամկետը ***անորոշ***:
4. Սույն պայմանագիրը հանդիսանում է աշխատանքային պայմանագիր:
5. Աշխատողի գործառույթներն են.

5.1 ՀՀ օրենսդրությանը համապատասխան ղեկավարել կազմակերպության արտադրատնտեսական և ֆինանսատնտեսական գործունեությունը՝ կրելով լիարժեք պատասխանատվություն կայացրած որոշումների և դրանց հետևանքների, կազմակերպության գույքի պահպանության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև իր գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների համար,

5.2 կազմակերպել բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը և արդյունավետ փոխգործակցությունը, ուղղել նրանց գործունեությունը դեպի զարգացում և կատարելագործում (հաշվի առնելով սոցիալական և շուկայական գործոնները), կազմակերպության աշխատանքի արդյունավետության բարձրացում, սպառման ծավալների աճ և եկամուտների ավելացում, որակի և մրցունակության աճ,

5.3իրականացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման կազմակերպումը,

5.4 ապահովել կազմակերպության բոլոր պարտավորությունների կատարումը պետական և համայնքային բյուջեների, պետական արտաբյուջետային սոցիալական հիմնադրամների, մատակարարների, պատվիրատուների և վարկատուների՝ ներառյալ բանկերի նկատմամբ, ինչպես նաև տնտեսական և աշխատանքային պայմանագրերի և բիզնես պլանների կատարումը,

5.5 գործունեությունը կազմակերպել նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների, աշխատանքի կազմակերպման և կառավարման առաջադիմական ձևերի լայնածավալ կիրառման, աշխատանքային, ֆինանսական և նյութական՝ գիտականորեն հիմնավորված նորմատիվների հիման վրա, ուսումնասիրել շուկայի իրադրությունը և նախկին փորձը (հայրենական և արտասահմանյան)՝ արտադրանքի (ծառայության) որակի և տեխնիկայի մակարդակի, արտադրության տեխնիկական արդյունավետության համաչափ բարձրացման, արտադրական պաշարների արդյունավետ օգտագործման և բոլոր տեսակի պաշարները խնայողաբար ծախսելու նպատակով,

5.6 միջոցներ ձեռնարկել կազմակերպությանը համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով ապահովելու, նրանց գիտելիքները և փորձը արդյունավետ օգտագործելու և զարգացնելու, նրանց կյանքի և առողջության համար աշխատանքի

անվտանգ ու բարենպաստ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրության պահանջները պահպանելու ուղղությամբ,

5.7 ապահովել կառավարման տնտեսական և վարչական մեթոդների համակցման կանոնները, հարցերի քննարկման և լուծման միասնականությունը և կոլեգիալությունը, սահմանված ժամկետներում աշխատավարձի վճարումը, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատողի նյութական և բարոյական շահագրգռվածության և պատասխանատվության սկզբունքի կիրառումը՝ նրա և կոլեկտիվի աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով,

5.8 սոցիալական գործընկերության սկզբունքի հիման վրա աշխատանքային կոլեկտիվի հետ համատեղ՝

ա) ապահովել կոլեկտիվ պայմանագրի նախագծի մշակումը, կնքումը և կատարումը, աշխատանքային կարգապահության պահպանումը

բ) նպաստել աշխատանքային շարժառիթների զարգացմանը, ինչպես նաև աշխատողների աշխատանքային նախաձեռնության և ակտիվության աճին,

5.9 լուծել կազմակերպության ֆինանսատնտեսական և արտադրատնտեսական գործունեության հետ կապված հարցերը՝ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքների շրջանակներում, առանձին ուղղություններով գործունեությունների վարումը հանձնարարել այլ պաշտոնատար անձանց՝ տնօրենի տեղակալների, փոխտնօրենի,

5.10 ապահովել կազմակերպության գործունեության և նրա տնտեսական կապերի օրինականության պահպանումը, շուկայական պայմաններում ֆինանսական կառավարման և գործառնությունների կարգապահության ամրապնդումը, սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև ներդրումների համար կազմակերպության գրավչությունը՝ ձեռնարկատիրական գործունեության մասշտաբների ընդլայնման նպատակով,

5.11 պաշտպանել կազմակերպության գույքային շահերը դատարաններում, պետական իշխանության այլ մարմիններում,

5.12 ընդունել կազմակերպության բնականոն գործունեությունը ապահովող ՀՀ օրենսդրությանը չհակասող ներքին և անհատական իրավական ակտեր, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատողներին ծանոթացնել դրանց հետ:

6. Աշխատողն իրավունք ունի.

6.1 ներկայացնել կազմակերպության շահերը ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական մարմինների հետ փոխհարաբերություններում,

6.2 գործել կազմակերպության անունից առանց լիազորագրի,

6.3 բացել հաշվարկային և այլ հաշիվներ բանկային կազմակերպություններում,

6.4 տնօրինել կազմակերպության միջոցներն ու գույքը՝ համապատասխան նորմատիվ ակտերի պահանջների պահպանմամբ և կազմակերպության կանոնադրությանը համապատասխան,

6.5 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սահմաններում որոշել գաղտնի տեղեկատվություն պարունակող տվյալների պաշտպանության ծավալը և կարգը,

7. Աշխատողը, ՀՀ օրենսդրությանը համաձայն, պատասխանատվություն է կրում.

7.1 իր պաշտոնական պարտականությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) համար,

7.2 աշխատանքային գործունեության իրականացման ընթացքում իրավախախտումներ թույլ տալու համար,

7.3 իր ընդունած այն որոշումների հետևանքների համար, որոնք ՀՀ օրենսդրության, կազմակերպության կանոնադրության, այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան դուրս են իր իրավասության շրջանակներից:
Եթե պատասխանատվություն առաջացնող գործողությունները կատարվել են այն անձանց կողմից, որոնց Աշխատողը պատվիրակել է իր իրավունքները, ապա Աշխատողը չի ազատվում պատասխանատվությունից,

7.4 կազմակերպության հիմնադիրների շահերին հակասող կամ անձնական շահերից ելնելով կազմակերպության գույքի և միջոցների անբարեխիղճ օգտագործման համար:

8. Գործատուն իրավունք ունի ստուգել Աշխատողի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը՝ չխոչընդոտելով վերջինիս լիազորությունների իրականացմանը:
9. Գործատուն պատասխանատվություն է կրում ՀՀ աշխատանքային օրենսդրության և սույն պայմանագրի դրույթները խախտելու համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
10. Գործատուն պարտավոր է ստեղծել աշխատանքի անվտանգ և արդյունավետ պայմաններ, աշխատանքի վայրը կահավորել անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պահպանության կանոններին համապատասխան, աշխատավարձը վճարել սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և չափով:
11. Գործատուն սույն պայմանագրով հավաստում է, որ Աշխատողի աշխատանքի պայմանները բնութագրվում են որպես անվտանգ:
12. Աշխատաժամանակի տևողությունը՝ չնորմավորված:
13. Աշխատողի ամսական աշխատավարձը կազմում է **306.875 ՀՀ դրամ** (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները), որը հաշվարկվում է յուրաքանչյուր ամիս և վճարվում է Աշխատողին մինչև հաջորդ ամսվա 15-ը:
14. Աշխատողի համար սահմանվում է ամենամյա արձակուրդ *20 աշխատանքային օր.*
15. Սույն աշխատանքային պայմանագիրը կարող է լուծարվել.
ա) կողմերի համաձայնությամբ,
բ) Աշխատողի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,
գ) Գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,
Պայմանագրի լուծման կամ դադարեցման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

16. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, մեկը տրվում է Աշխատողին, մյուսը՝ Գործատուին:

| ԳՈՐԾԱՏՈՒ<br>**ՓՐԱՅՄ ՄԵԴԻՔԱԼ ՍՊԸ** | ԱՇԽԱՏԱԿԻՑ<br>**Արմեն Ցոլակի Խանաղյան** |
|---|---|
| Իրավ. հասցե՝ ք. Երևան, Օհանովի փ 24շ, բն 52<br>ՀՎՀՀ՝ 01334053<br><br>Տնօրեն՝ Արմեն Խանաղյան<br>ստորագրություն | Հասցե՝ ք. Երևան, Օհանովի փ 24շ, բն 52<br>Նույն. քարտ՝ 004498176, տրվ. 29.09.2014թ.<br>012-ի կողմից,<br>ՀԾՀ՝ 1608680126<br>ստորագրություն |

PRIME MEDICAL ՓՐԱՅՄ ՄԵԴԻՔԱԼ ПРАЙМ МЕДИКАЛ 01334053